ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/116

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2018թ. թիվ 04/26-3/13720-18 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 26.07.2018թ. թիվ 02/16.4/3631-18 գրության հիման վրա, 30.07.2018թ. թիվ 04/26-3/13720-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Գազկոմշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.07.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ի թիվս այլ ընկերությունների մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ ժամը 18:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի 2.1-րդ ենթակետով կայացվել է որոշում Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընկերությանը ծանուցվել է հայտի ապահովման և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-1 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) Ընկերությունը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/հ 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

2) Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

3) Ընկերության կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն

Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

4) Բացակայում են Ընկերության ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

5) Բացակայում են Ընկերության ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:

6) Բացակայում են Ընկերության ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

7) Ընկերության ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված AO507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

8) Բացակայում են Ընկերության ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես

նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում Ընկերությանը ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում նշված թերությունները շտկելու մասին:

Ընկերության կողմից թերությունները շտկվել և համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետներում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3-2 արձանագրության (այսունետ նաև՝ Արձանագրություն թիվ 3-2) 1-ին կետի 1.1 և 1.3 ենթակետերով արձանագրվել է Ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի ուսունմասիրության արդյունքները, համաձայն որի՝

Հ/Հ	Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն	Արձանագրված անհամապատասխանության ուղղում
1	Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:	Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանակացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
2	Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:	Հավելված 5.2-ում ընթացակարգի ծածկագիրը չի ուղղվել:
	Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս	Պատասխան գրությամբ Մասնակիցը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող

3	համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն (կցվում է) այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել: Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:	ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր: Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը:
4	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:	Մասնակցի կողմից ներկայացվել են երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ պայմանագրի 1.3 կետի՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23 100 000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4 862 650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած

		մասը՝ 18 237 350 (23 100 000- 4 862 650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:
5	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:	Մասնակցի կողմից ներկայացվել են հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:
6	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:	Մասնակցի կողմից ներկայացվել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի հաստատած ակտը:
7	Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:	Մասնակցի կողմից ներկայացվել է 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշվի երկկողմանի հաստատած օրինակը:
8	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:	Մասնակցի կողմից ներկայացված Ծավալաթերթը-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.011.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

Նույն անձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետով կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Ընկերության հայտը մերժվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ վերջինս հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի պահանջները. «Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ ժամը 16:30-ին տեղի ունեցած նիստի N 3-2 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն 3-2) 1-ին կետի 1.1 ենթակետում ներկայացված ուսումնասիրության արդյունքների աղյուսակի (այսուհետ՝ Աղյուսակ) առաջին կետին, որտեղ որպես անհամապատասխանություն նշված է, որ Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքած Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, Ընկերությունը տեղեկացրել է, որ նշված պայմանագիրը ոչ թե փոփոխվել այլ լուծարվել է կնքման օրը և նույն օրը՝ 01.02.2018թ, կնքվել է նոր պայմանագիր, որը ներկայացվել է հանձնաժողովին, իսկ լուծարված պայմանագիրը հանձնաժողովին ներկայացվել էր շփոթմամբ:

Աղյուսակի 4-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկատվությունն այն մասին, որ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61» պայմանագիրը կատարված է ոչ պատշաճ՝ չի համապատասխանում իրականությանը, քանի որ նշված ուշացումները չեն հանդիսացել Ընկերության անգործության արդյունք, այլ կապված են եղել 2017թ ապրիլի 10-ից ՀՀ ազգային ժողովի պատգամավորի ընտրությունների ընթացքում շին օբյեկտը ընտրական տեղամասի վերածելու հետ, ինչի մասին Ընկերության կողմից նաև Երևանի քաղաքապետարան է ներկայացվել համապատասխան գրություն:

Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի կողմից առկա է տեղեկանք, առ այն, որ 17.03.2017թ. կնքված թիվ ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն աշխատանքներն իրականացրել է ամբողջ ծավալով, պատշաճ որակով և ժամանակին:

Աղյուսակի 8-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկատվությունն այն մասին, որ 29.09.2016թ կնքած ենթակապալի պայմանագրին կցված ծավալաթերթ-նախահաշվի վրա գրված է այլ ծածկագիր համապատասխանում է իրականությանը, բայց դա զուտ անփութության հետևանք է եղել, իսկ ծավալաթերթ-նախահաշիվը իրականում նշված ենթակապալի պայմանագրի ծավալաթերթ-նախահաշիվն է, ինչի մասին վկայում են նաև այդ պայմանագրի շրջանակներում առկա կատարողական ակտերը և հաշիվ-ապրանքագրերը:

Աղյուսակի 2-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված է, որ հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը չի ուղվել Ընկերության կողմից: Տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից կատարվել է շտկումը և «բաց ընթացակարգի» արտահայտությունը փոխարինվել է «բաց մրցույթ» արտահայտությամբ, իսկ ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրի «Ը» տառը դա զուտ տպագրական սխալ է և 5.2 հավելվածը ներկայացված է նույն մրցույթի շրջանակներում ըստ էության վերաբերում է այդ մրցույթին:

Աղյուսակի 3-րդ կետում ներկայացված անհամապատասխանության վերաբերյալ.

Կետում նշված տեղեկությունը այն մասին, որ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը ներկայացված չէ, չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայն Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի պարզաբանման մասին հայտարարության, հարցադրմանը թե ինչ կրթություն է հարկավոր փորձագետ-կոնստրուկտորի համար, Պատվիրատուն պատասխանել է, բարձրագույն կրթությամբ ճարտարագետ-շինարար, ինչից ելնելով Ընկերությունը ներկայացրել է համապատասխան մասնագետի ճարտարագետ-շինարարի որակավորումը և 25 տարվա փորձը հավաստող փաստաթղթերի պատճենները, իսկ

փորձագետ-կոնստրուկտորի մասով ներկայացվել է համապատասխան 8 տարվա փորձը հավաստող փաստաթղթեր:

Ընկերությունը հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովը բանավոր հարցում է կատարել Ընկերության կողմից, որպես հիմնական աշխատակազմում ներառված մասնագետ Վաչագան Գևորգյանին նրա մասնակցության վերաբերյալ, որի իրավունքը Ընկերության կարծիքով հանձնաժողովը չուներ, քանի որ Կարգի 67-րդ կետի համաձայն Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Աշխատակազմի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացվել է նոր տվյալներ և փաստաթղթեր Վաչագան Գևորգյանին փոխարինելով Զավեն Խլղաթյանով:

Ընկերության կողմից հրավերի 5.2 հավելվածում սահմանված տեղեկանքի աղյուսակի գործատուի անվանումը դաշը լրացնելիս հիմք է ընդունել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու դեպքում ներկայացված մասնակիցների գործատու հանդիսանալու փաստը:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը գտնում է, որ իր կատարած գործողությունները իրավաչափ են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

«ԳԱԶԿՈՄՇԻՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի շրջանակներում 01.08.2018թ. ժամը 11:05-ին և 16.08.2018. թիվ 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը: Ընկերության ներկայացուցիչը 16.08.2018. թիվ 10:15-ին հրավիրված նիստին հայտնել է, որ

«Գազկոմշին» ՍՊԸ-ի և Զավեն Խլղաթյանի միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որը ներկայացվել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

3. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 26.07.2018թ. թիվ 02/16.4/3631-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար 11.05.2018թ. կազմակերպված «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքերի ձեռքբերման գնման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Գազկոմշին» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը մերժվել է՝ որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններ մի մասը չշտկելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի շրջանակներում 01.08.2018թ. ժամը 11:05-ին և 16.08.2018. թիվ 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր նշել են, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով շտկել դրանք, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում պատշաճ կարգով չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

4. ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ. ժամը 18:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3-1 արձանագրության համաձայն՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, ուստի սահմանված կարգով Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3-2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ամբողջությամբ չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես Ընկերությունը չի համապատասխանում «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2018թ. թիվ 04/26-3/13720-18 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 26.07.2018թ. թիվ 02/16.4/3631-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Գազկոմշին» ՍՊԸ-ի 31.07.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային

եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե կողմից ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2018թ. ժամը 18:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 3-1 արձանագրության համաձայն՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես.

1) Ընկերությունը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

2) Հավելված 5.2-ում «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի» արտահայտության փոխարեն գրված է «ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի» արտահայտությունը:

3) Ընկերության կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրն առոչինչ համարել:

Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:

4) Բացակայում են Ընկերության ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

5) Բացակայում են Ընկերության ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1 օրինակելի ձևերը:

6) Բացակայում են Ընկերության ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-

ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

7) Ընկերության ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:

8) Բացակայում են Ընկերության ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը և Ընկերությանն առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3-2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից պատշաճ կարգով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես.

1) Ընկերությունը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50 մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

2) Հավելված 5.2-ում ընթացակարգի ծածկագիրը չի ուղղվել:

3) Պատասխան գրությամբ Ընկերությունը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի

աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր: Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը:

4) Ընկերության կողմից ներկայացվել են երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ պայմանագրի 1.3 կետի՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23 100 000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4 862 650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած մասը՝ 18 237 350 (23 100 000- 4 862 650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:

5) Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.01.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն չի համապատասխանում «Տեխնիկական միջոցներ», «Աշխատանքային ռեսուրսներ» և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշներին:

• «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 61-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝

պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ որակավորման չափանիշը հիմնավորելու համար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 17.03.2017թ. կնքված կապալային աշխատանքների կատարման 46 199 916 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հաշիվ-ապրանքագրերը և աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23 100 000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացույցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4 862 650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած մասը՝ 18 237 350 (23 100 000- 4 862 650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:

Այսպես՝ Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 50 %-ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 50 %-ի կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում մինչև 30.08.2017թ. ներառյալ:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրության համաձայն՝ 16.05.2018թ. դրությամբ Ընկերության կողմից կատարվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքներից 4 862 650 ՀՀ դրամի աշխատանք: Միևնույն ժամանակ կողմերի միջև 13.07.2017թ. կնքված թիվ 2, 21.07.2017թ. կնքված թիվ 3, 15.08.2017թ. կնքված թիվ 4, 27.09.2017թ. կնքված թիվ 5, 29.09.2017թ. կնքված թիվ 6 արձանագրությունների, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերի համաձայն՝ Ընկերության կողմից ամբողջ ծավալով կատարվել են, իսկ Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքները և վճարվել դրանց դիմաց:

Երևանի քաղաքապետարանին ուղղված 12.04.2017թ. թիվ 12 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Ընկերությունը համաձայն Պայմանագրի նույն թվականի ապրիլի 10-ից սկսել է իրականացնել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ. 139 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները և քանի որ մանկապարտեզի շենքը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների ընթացքում վերածվել էր ընտրական տեղամասի աշխատանքների սկիզբը հետաձգվել է: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ընկերությունը Երևանի քաղաքապետարանին խնդրել է երկարացնել աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը 30 օրով և աշխատանքների սկիզբ համարել 10.04.2017թ.:

Կողմերի միջև 30.08.2017թ. կնքվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի համաձայն Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 29.09.2017թ.: Կողմերի միջև 26.09.2017թ. կնքվել է Պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը, որի համաձայն պայմանագրի գինն ավելացել է 2 514 070 ՀՀ դրամով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 17.03.2017թ. կնքված թիվ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61» պայմանագիրը, պայմանագրի ամբաժանելի մասը կազմող համաձայնագրերը, հանձնման-ընդունման արձանագրությունները, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերը, Ընկերության 12.04.2017թ. թիվ 12 գրությունը, գտնում եմ, որ այն պետք է դիտարկել որպես պատշաճ կատարված պայմանագիր, քանի որ Ընկերությունը սահմանված կարգով պատշաճ ամբողջ ծավալով իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքները և արդյունքը հանձնվել և ընդունվել է պատվիրատուի՝ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի կողմից:

Ավելին՝ Երևանի քաղաքապետարանը 31.07.2018թ. «Գազկոմշին» ՍՊԸ-ին տրված թիվ 16/17241 տեղեկանքով հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարել է պատշաճ որակով, ժամանակին և ամբողջ ծավալով:

- «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի և «Մեվրիկար» ՍՊԸ-ի միջև 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է

23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

Ուսումնասիրելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի և «Մեվրիկար» ՍՊԸ-ի միջև 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագիրը, պայմանագրի առարկան (Հայաստանի Հանրային Հեռուստատեսության գլխավոր մասնաշենքի վերակառուցման աշխատանքներ), պատվիրված աշխատանքների արժեքը (57 306 937 ՀՀ դրամ), պայմանագրի 02.11.2016թ. թիվ 1 փոփոխությունը, որի համաձայն պայմանագրի գինն ավելացել է 14 326 733 ՀՀ դրամով, և դրանք համադրելով ծավալաթերթ-նախահաշվում և փոփոխված ծավալների վերաբերյալ ծավալաթերթ-նախահաշվում նախատեսված աշխատանքների և գնի հետ, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ ծավալաթերթ-նախահաշվի մեջ նշվել է այլ պայմանագրի ծածկագիր, այնուամենայնիվ պայմանագրում և ծավալաթերթ-նախահաշիվներում նախատեսված աշխատանքները և գինը, այդ թվում ավելացված գնի մասով, համընկնում են:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցներ:

Հրավերով պահանջվել է է հետևյալ տեխնիկական միջոցները՝

Տեխնիկական միջոցի անվանումը	*Տիպը*	*Պահանջվող քանակը*
Ինքնաթափ ա/մ	ցանկացած	2 հատ
Բետոնամղիչ (գործարանային 50 մ երկարությամբ խողովակ), մրցույթին մասնակցելու օրը մեքենան պետք է գտնվի ՀՀ տարածքում	ASTRA 8450 (կամ համարժեք)	1 հատ

«Գազկոմշին» ՍՊԸ-ն «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացրել է Ընկերության և «Պատ Գրուպ» ՍՊԸ-ի միջև

01.02.2018թ. կնքված բետոնի մղման ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ պայմանագրում նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին: Ուստի Ընկերությանն առաջարկվել է շտկել նշված անհամապատասխանությունը:

Ընկերության հայտը մերժելու մասին որոշման մեջ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերությունը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով «գործարանային 50 մ երկարությամբ խողովակով» արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

Այս տեսանկյունից հայտնում եմ, որ Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն Ընկերության կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող պայմանագրում, քանի որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրում բացակայել է բետոնմղիչի՝ գործարանային 50 մ երկարությամբ խողովակ լինելու՝ հրավերով նախատեսված պահանջի վերաբերյալ դրույթը, ուստի գնահատող հանձնաժողովը ծանուցել է Ընկերությանն՝ առաջարկելով շտկել նշված անհամապատասխանությունը: Արձանագրում

եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում պատշաճորեն շտկվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը և ներկայացվել է վերոհիշյալ պահանջի (գործարանային 50 մ երկարությամբ խողովակ) առկայությամբ պայմանագիրը:

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Հրավերով սահմանվել է, որ պայմանագրի կատարման համար պահանջվում է նաև հետևյալ աշխատանքային ռեսուրսը՝

Մասնագետների			
նվազագույն քանակը	*որակավորումը*	*աշխատանքային փորձը*	
		ժամանակահատվածը	*գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը*
1	ճարտարագետ-շինարար, որը պետք է ունենա նաև քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում (բարձրագույն կրթությամբ)	ճարտարագետ-շինարարի առնվազն 25 տարվա աշխատանքային փորձ իսկ փորձագետ-կոնստրուկտորի առնվազն 8 տարվա աշխատանքային փորձ	շինարարության ոլորտում համանման աշխատանքների կատարում

Հրավերով սահմանվել է նաև, որ եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների

անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				

«Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից հայտի հավելված թիվ 5.2-ում՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Ընկերության կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների ցանկում որպես ինժեներ-շինարար, փորձագետ-ինստրուկտոր նշվել է Վաչագան Գևորգյանը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 18.07.2018թ. գրությամբ Վաչագան Գևորգյանը խնդրել է առոչինչ համարել իր կողմից 22.06.2018թ. ստորագրված՝ «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին համաձայնությունն, այն պատճառով, որ ինքը տեղյակ չի եղել հրավերի այն պահանջի մասին, համաձայն որի ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով Վաչագան Գևորգյանի վերոհիշյալ գրությունը, Ընկերությանն առաջարկել է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի վերոհիշյալ գրության վերաբերյալ և ապահովել հրավերի ՄԱՍ I-ի 2.5-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի առկայության պահանջը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.07.2018թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ պատասխան գրությամբ Ընկերությունը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր:

Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենը:

Այսպես՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ն Վաչագան Գևորգյանի փոխարեն, որպես առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետ ճարտարագետ - շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտոր հայտի հավելված 5.2-ում նշել է Զավեն Խլղաթյանին՝ կցելով վերջինիս դիպլոմը, աշխատանքներում ներգրավվելու մասին համաձայնությունը, ինքնակենսագրականը: Ընկերությունը միևնույն ժամանակ չի ներկայացրել մասնագետի՝ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերը: ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի շրջանակներում հրավիրված նիստերին Ընկերությունը պնդել է, որ առկա են Զավեն Խլղաթյանի փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, որոնք սակայն տեղյակ չլինելով դրանք ներկայացնելու անհրաժեշտության մասին չեն ներկայացվել, միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի մոտ կրկնակի անգամ շտկելու հնարավորություն ընձեռնելու իրավունքի առկայության պայմաններում, Ընկերության կողմից կներկայացվեին նշված փաստաթղթերը:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացրել է Զավեն Խլղաթյանի փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Զավեն Խլղաթյանը բավարարում է հրավերով սահմանված փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող ճարտարագետ-շինարարի համար նախատեսված չափորոշիչներին: Այսպիսով՝ Ընկերության կողմից որպես աշխատանքային ռեսուրս ներկայացված մասնագետ փորձագետ-կոնստրուկտոր Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հրաժարվել է իր իսկ կողմից ներկայացված՝ ընթացակարգի շրջանակներում իրականացվելիք աշխատանքներում վերջինիս ներգրավվելու մասին համաձայնությունից: «Գազկոմշին» ՍՊԸ-ին ծանուցվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման պահանջն ապահովելու համար: Վերջինիս կողմից ներկայացվել է նոր մասնագետ, ի դեմս Զավեն Խլղաթյանի, որի՝ հրավերով պահանջվող որակավորումը հավաստող

փաստաթղթերը սակայն ներկայացվել են թերի: Միևնույն ժամանակ ՍՑ-ԱՄ-2018/116 ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված աշխատանքային ռեսուրս ներկայացված Զավեն Խլղաթյանի՝ հրավերով նախատեսված որակավորումը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին: Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև Վաչագան Գևորգյանի կողմից Ընթացակարգով նախատեսված աշխատանքներում ներգրավելու համաձայնությունից հրաժարվելու, Զավեն Խլղաթյանի որակավորումը հավաստող փաստաթղթերի առկայության փաստը, գտնում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն մասով չեն կարող արձանագրվել «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքի առկայությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է նաև այն, որ Զավեն Խլղաթյանը ըստ հավելված 5.2-ի հանդիսանում է «Գազկոմշին» ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ «Սեյսմնախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն որպես շտկված տարբերակ ներկայացված թիվ 5.2 հավելվածում որպես Զավեն Խլղաթյանի գործատու նշել է «Գազկոմշին» ՍՊԸ-ն: Միևնույն ժամանակ Զավեն Խլղաթյանի կողմից ներկայացված գրավոր համաձայնության համաձայն՝ Զավեն Խլղաթյանը հանդիսանում է «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր, որը հաստատվում է նաև «Սեյսմանախագիծ» ՍՊԸ-ի կողմից 15.08.2018թ. տրված թիվ Ե-Տ-01/18 տեղեկանքով:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Ընկերության և Զավեն Խլղաթյանի միջև 20.07.2018թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, որի 1-ին կետի համաձայն՝ Զավեն Խլղաթյանը պարտավորվում է «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում «Գազկոմշին» ՍՊԸ-ի և ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի միջև Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագիր կնքվելու դեպքում, այդ պայմանագրի

շրջանակներում կատարել աշխատանքներ որպես ճարտարագետ-շինարար, փորձագետ-կոնստրուկտոր, ընդ որում՝ շինարարության ամբողջ ընթացքում ապահովել իր ամենօրյա ներկայությունը շին. հրապարակում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոհիշյալ պայմանագիրը, գտնում եմ, որ իրավաչափ է «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացված հայտի թիվ 5.2 հավելվածի 4-րդ կետում «Գործատուի անվանումը» դաշտում Ընկերության անվանումը լրացված լինելը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված հայտի 5.2 հավելվածում Ընթացակարգի «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2» ծածկագրի փոխարեն «ՀՀՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-18/2» ծածկագիր լրացված լինելը («Մ» տառի փոխարեն նշվել է «Ը»), որը նաև չի շտկվել Ընկերության կողմից Կարգի 47-րդ կետի հիման վրա ծանուցվելուց հետո, գտնում եմ, որ սույն տեխնիկական վրիպակը էական նշանակություն չի կարող ունենալ «ՀՀՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գազկոմշին» ՍՊԸ-ի վարքագիծը գնահատելու և Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն արձանագրելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ վերոհիշյալ հիմնավորումների շրջանակներում առկա չեն «Գազկոմշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2018թ. թիվ 04/26-3/13720-18 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00843968) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ